ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

# ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Է»

(Սկիզբը՝ 4-րդ էջում)

- Վրաց քաղաքակրթությունը լիարժեքորեն կարող է տեղ զբաղեցնել աշխարհում: Ինքնությունը պատմականորեն իր արտահայտությունն է գտնում հանդուրժողականության մեջ: Տարբեր ծագման, դավանանքի մարդկանց հետ խաղաղ գոյակցության ավանդույթը դարերի պատմություն ունի: Հանդուրժողականությունն այն է, ինչը այսօր որոշակիորեն պակասում է աշխարհին: Մենք այդ ավանդույթը այնպես ենք հզորացնելու, որ դառնանք օրինակելի,- ասաց Վրաստանի նորընտիր նախագահը:

### «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ԱՆԸՆԴՈՒՆԵԼԻ Է ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ»



Անդրադառնալով երկրի համար ցավալի թեմային՝ երկրի ամբողջականության հարցին, Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ այսօր երկիրը կանգնած է նշանակալի մարտահրավերների առջեւ. Աբխազիան եւ Հարավային Օսեթիան բռնազավթված են Ռուսաստանի կողմից, գոյություն ունի բռնազավթված գոտի, որն անցնում է երկրի տարածքի խորքերով եւ որտեղից առեւանգում են Վրաստանի քաղաքացիներին: Այդ ամենն անընդունելի է անկախ պետության համար:

- Մենք դրա հետ երբեք չենք հաշտվի: Մեր բնակչությանն անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն եւ ավելացած անվտանգություն: Այդ ուղղությամբ առավել սերտորեն պետք է համագործակցենք մեր գործընկերների ու Եվրամիության դիտորդական առաքելության հետ,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավաստեց, որ երկրի բնակչության առավել բարձր մակարդակ է պահանջվում, առավել սերտ համագործակցություն ՆԱՏՕ-ի հետ:

- Վրաստանի պաշտպանունակությունը կախված է մեր զինված ուժերի արհեստավարժությունից, պատրաստվածությունից, արդի սպառազինությունից: Ես լիովին վստահություն եմ հայտնում Վրաստանի զինված ուժերին եւ՝ իմ հարգանքը հայտնում մեր զինծառայողներին ու վետերաններին: Ցանկանում եմ համոզված լինեք, որ լրիվությամբ ներգրավված կլինեմ զինված ուժերի մարտունակության բարձրացման, բանակի հզորացման եւ երկրի պաշտպանության ապահովման հարցերում,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:

### ՎՐԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԱՄՐԱՑՆԻ ԻՐ ԴԻՐՔԵՐԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Խոսելով պաշտպանության եւ անվտանգության հարցերի մասին, Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ խաղաղ եւ կայուն Կովկասը անհրաժեշտ է ոչ միայն տարածաշրջանի, այլ ողջ աշխարհի համար: Նրա խոսքով, եթե Ռուսաստանը ցանկանում է դառնալ միջազգային հանրության անդամ, ապա Մոսկվան թե' բանավոր եւ թե' ֆիզիկական գործունեությամբ պետք է ապացուցի, որ ճանաչում է միջազգային իրավունքի նորմերը:

- Վրաստանը պետք է իր դիրքերն ամրապնդի Կովկասում: Մենք կարող ենք այս տարածաշրջանում վերադարձնել մեր պատմական դերը եւ ստանձնել այդ պատասխանատվությունը: Ռուսաստանը՝ որպես Կովկասի հարեւան, պետք է գիտակցի, որ եթե ցանկանում է լինել միջազգային հանրության լիարժեք անդամ եւ ծրագրում է այս տարածաշրջանի հետ հաստատել նորմալ հարաբերություններ, պետք է ապացուցի, որ ինքն ընդունում է միջազգային իրավունքի բոլոր նորմերը: Դա անհրաժեշտ է հարեւանների հետ իրավահավասար եւ խաղաղ հարաբերությունների հաստատման համար:

### «ԱԲԽԱԶՆԵՐԻ ԵՎ ՕՍԵՐԻ ՀԵՏ ՄԵԶ ՄԻԱՎՈՐՈՒՄ Է ԱՆՑԱԾ ՈՒՂԻՆ»

Անդրադառնալով Վրաստանի բռնազավթված երկրամասերի թեմային՝ Սալոմե Զուրաբիշվիլին իր ծրագրային ելույթում հայտարարեց, որ աբխազների եւ օսերի հետ միավորված են անցած ուղիով, որ ազգակցական ժողովուրդներ են: Վրաստանի նորընտիր նախագահի համոզմամբ, հասարակայնության ամրապնդման համար, կարեւորագույնը համերաշխությունն է եւ, առաջին հերթին, սերունդների միջեւ համերաշխությունը:

- Սոցիալական համերաշխության վրա է կանգնած հզոր պետությունը: Այնտեղ, որտեղ առկա է կարեկցանք, փոխաջակցություն, առկա է կայունություն, այնտեղ բացվում է առաջընթացի ուղին: Համերաշխություն՝ նշանակում է, որ մենք հասկանում եւ կանգնած ենք բոլոր նրանց կողքին, ում անհրաժեշտ է աջակցություն՝ սոցիալապես անպաշտպաններին, միայնակ մայրերին, սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց: Ես կլինեմ մեր փախստականների կողքին,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին:



### «ԵՍ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՆ ՆԱԽԱԳԱՀՆ ԵՄ»

Իր ծրագրային ելույթում Սալոմե Զուրաբիշվիլին առանձնակի անդրադարձավ Վրաստանում կանանց դերի ուժեղացման հարցին՝ նշելով, որ երկրի համար օտարահունչ չէ կանանց դերի ուժեղացումն ու իրավահավասարությունը: Սալոմե Զուրաբիշվիլու խոսքով, հարյուր տարի առաջ եւս, երկրում կանայք ժողովրդավարական ընտրություններում օգտվում էին հավասար իրավունքներից, եւ այն ժամանակ արդեն ինգ կին ընտրվել էր խորհրդարանի պատգամավոր:

- Ես առաջին կին նախագահն եմ Վրաստանի պատմության մեջ: Նախագահ ընտրելով ինձ՝ շարունակեցինք ավանդույթը: Դա բացառիկ երեւույթ էր այն ժամանակվա Եվրոպայի համար, եւ այսօր մենք կրկին կատարեցինք առաջընթաց քայլ: Քայլ, որը դեռեւս բացառություն է աշխարհում, որտեղ, այսօրվա դրությամբ, ընդամենը 11 կին նախագահ կա: Դրանով մենք ապացուցեցինք, որ Վրաստանում կնոջ դերն ուժեղանում է, եւ նրա իրավահավասարությունը մեզ համար օտարահունչ հասկացողություն չէ,- նշեց Սալոմե Զուրաբիշվիլին:

### «ԱՆԿԱԽ, ՀԶՈՐ, ԱԶԱՏ, ԱՐԴԻ, ԵՎՐՈՊԱԿԱՆ՝ ԱՀԱ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՆ»

Նախագահական երդմնակալության արարողությանը, իր ծրագրային ելույթի ավարտին, Վրաստանի նորընտիր նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին ներկայացրեց իր հայացքները՝ կապված երկրի ապագայի հետ: Նրա խոսքով, երկիրը պետք է հանգստանա ու զարգանա: Ինչպես նշեց Սալոմե Զուրաբիշվիլին, Վրաստանն ունի հզոր մարդկային ռեսուրս, տնտեսական ներուժ, մեծանուն է հիանալի, տաղանդավոր սերունդ:

- Գլխավորն է՝ հավատանք մեզ, մեր ուժերին եւ ստանձնենք պատասխանատվություն ապագայի համար: Ես եկա, վերադարձա, քանի որ հավատում էի եւ հիմա էլ հավատում եմ մեր երկրի ապագային: Մենք պետք է հավատանք Վրաստանի ապագային: Անկախ, հզոր, ազատ, արդի, եվրոպական՝ ահա Վրաստանի ապագան,- հայտարարեց Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՑ ՎՐԱՍՏԱՆԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է

# ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏԱՎ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Խորհրդարանի կողմից հաստատված սահմանադրությունում նշված է, որ Վրաստանը սոցիալ-իրավական պետություն է, որը հոգում է հանրությունում սոցիալական արդարության, սոցիալական հավասարության եւ սոցիալական համերաշխության սկզբունքների հաստատման մասին:

Սահմանադրությամբ ապահովվում է բոլոր մարդկանց հավասարությունը եւ՝ արգելվում խտրականությունը ռասայի, մաշկի գույնի, սեռի, ծագման, ազգային պատկանելության, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, սոցիալական պատկանելության, գույքային կամ կոչման, բնակության վայրի կամ այլ հողի վրա խտրականության ցանկացած դրսեւորում: Նոր սահմանադրությամբ սահմանված է նաեւ ամուսնության ձեւակերպումը, եւ այդ դրույթում նշված է, որ ամուսնությունը կնոջ եւ տղամարդու միությունն է՝ ընտանիք ստեղծելու նպատակով:

Վրաստանի սահմանադրության նոր խմբագրությունում հստակեցումներ են կատարվել նաեւ գյուղատնտեսական հողամասերի ուղղությամբ: Մասնավորապես, նոր խմբագրության համաձայն, գյուղատնտեսական նշանակության հողը, որպես առանձնահատուկ նշանակության ռեսուրս, կարող է լինել միայն պետության, ինքնակառավարող միավորի, Վրաստանի քաղաքացու կամ Վրաստանի քաղաքացիների միության սեփականության ներքո:




Սահմանադրական փոփոխությունների շրջանակներում, փոխվել է նաեւ պետական հարկերի սահմանմանն առնչվող 94-րդ հոդվածը, որը ձեւավորվել է անցումային դրույթի տեսքով, որտեղ նշված է, որ, այս օրենքի գործարկումից 12 տարվա ընթացքում, աքցիզից բացի, ընդհանուր-պետական հարկի նոր տեսակի գործարկումը կամ ավելացումը հնարավոր է միայն հանրաքվեի միջոցով, բացառությամբ օրգանական օրենքով սահմանված դեպքերի:

Վերոնշյալից բացի, սահմանադրությամբ հստակեցվել են նաեւ քաղաքական մի շարք հիմնադրույթներ, մասնավորապես, նախագահի ընտրության կարգը, խորհրդարանի համալրման հարցը եւ երկրի արտաքին քաղաքական ուղղությունը: Այսպես, սահմանադրության նոր խմբագրության համաձայն, 2020 թվականին պահպանվելու է մեծամասնական ընտրահամակարգը, թեպետ քաղաքական կուսակցություններին վերապահվում է՝ խորհրդարանական ընտրություններում մեկ անգամ եւս դաշինք ձեւավորելու իրավասությունը: Ըստ նոր սահմանադրության, երկրոր ամբողջապես համամասնական ընտրահամակարգին անցումն իրականացնելու է 2024 թվականից:

Սահմանադրական փոփոխությունը առնչվել է նաեւ խորհրդարանի գտնվելու վայրին: Այսպես, օրենսդիր մարմնի որոշման համաձայն, 2019 թվականի հունվարից խորհրդարանը Քութայիսիից ամբողջությամբ պետք է տեղափոխվի Թբիլիսի:

Ինչ վերաբերում է նախագահի ընտրության կարգի փոփոխությանը, ապա 2018 թվականի նախագահական ընտրությունները, վերջին անմիջական ընտրություններն էին, որոնց ընթացքում ընտրողները, վեց տարվա ժամկետով, ուղղակիորեն ընտրեցին երկրի նախագահին: Փոփոխության համաձայն, 2023 թվականից Վրաստանի նախագահի ընտրությունը տեղի է ունենալու ընտրական կոլեգիայի կողմից անուղղակի ձեւով:

Նոր սահմանադրությամբ լուծարվում է երկրի նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհուրդը եւ նրա փոխարեն, պատերազմական դրության ժամանակ, նախատեսվում է Վրաստանի նախագահի ղեկավարության ներքո Ազգային պաշտպանության խորհուրդ՝ խորհրդակցական մարմին:

Ինչպես նշվեց, սահմանադրության նոր խմբագրությունում հստակորեն վավերացվել է նաեւ երկրի արտաքին քաղաքական ուղղությունը: Խոսքը վերաբերում է երկրի եվրոպական, եվրատլանտյան կառույցներին ինտեգրմանը: Սահմանադրական դրույթներում պարզորոշ նշված է, որ սահմանադրական մարմինները իրենց իրավասության սահմաններում, պետք է դիմեն բոլոր միջոցների՝ Եվրամիության եւ Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությունում Վրաստանի լիարժեք ինտեգրումն ապահովելու համար:

Ավելացնենք, որ, ընդունված որոշման համաձայն, Վրաստանի հինգերորդ նախագահի երդմնակալությունից անմիջապես հետո, նոր սահմանադրությունը օրինականորեն ուժի մեջ մտավ:

ԱՄԱՆՈՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ

# ՄՆԱՍ ԲԱՐՈՎ, ՇՈՒՆ, ԲԱՐԵՎ, ԽՈԶՈՒԿ

*2019 թ.-ի փետրվարի 5-ին Դեղին Հողե Շունը իշխանությունը կհանձնի Հողե Խոզին: Փոխվում են տոտեմները, բայց տարերքը մնում է նույնը: Խոզը իշխում է իմաստուն ու անշտապ: Մինչեւ գալիք տարվա գարուն նա կզբաղվի մեջքը քորելով եւ ծրագրեր կազմելով: Բայց հենց որ մարտյան արեւը տաքացնի հողը, վեր կքշտի թեւերը եւ խռխռոցով գործի կանցնի…*



Խոզն անսահման բարի ու շռայլ է, նա յուրաքանչյուրին, եթե վերջինս ցանկություն դրսեւորի, կտա՝ նյութական վիճակը բարելավելու հնարավորություն: Բայց իր բարիքները կկիսի միայն այն մարդկանց հետ, ովքեր խոհեմություն կունենան փողերը չշռայլելու եւ ֆինանսական արկածախնդրությունների մեջ չխճճվելու:

Խոզը հիանալի մայր ու տնտեսուհի է: Նա ինքն էլ սիրում է ուտել եւ բոլորին կարողանում է կերակրել, փաղաքշել, հանգստացնել:

Խոզի տարին ամենահարմար ժամանակն է ամուսնանալու, ընտանիք ստեղծելու եւ երեխաների ծնունդի համար: Եվ բացառված չէ, որ 2019-ին զագսերը ու ծննդատները աշխատեն արտահերթ ռեժիմով:

**ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ**

2019 թվականին տան գլխավոր զարդը, իհարկե, պետք է լինեն Խոզուկները՝ նկարի տեսքով, պատրաստված խեցիից, մորթուց, թավշից…

Տոնական սեղանը պետք է զարդարել ծաղկունքի եւ պտղաբերության խորհրդանիշներով:

Ամանորյա սեղանը պետք է ծանրաբեռնվի ուտեստներով ու խմիչքներով: Ձուկ, միս, թռչուն, լոբի, ընկույզ, բանջարեղեն, մրգեր… Միակ բանը, որ սեղանին չպետք է դրվի՝ խոզի միսն է, ապխտած կամ ճարպոտ պատառը:

Ի՞նչ հագուստ ընտրել՝ մեր նոր Տիրուհուն դիմավորելիս: Խոզը հայտնի կոկետուհի է, սիրում է զարդարանք, գլխարկներ, ժապավեններ: Այդ պատճառով պետք է ունենալ կամ նոր հագուստ, կամ նոր զարդ ու հարմարանք՝ հին հագուստի համար: Ի դեպ, զարդարանքները թող լինեն ոսկե կամ բնական քարերից, դեղնագույն երանգներով:

Ժամացույցի զարկերից առաջ ձեր ուսերին գցեք որեւէ մորթի, իսկ ուղիղ կեսգիշերին հանեք մորթին: Դրանով դուք ձեր շնորհակալությունը կհայտնեք անցած տարվա տիրոջը՝ Շանը, եւ նա իրեն հետ կտանի ձեր բոլոր խնդիրներն ու վեճերը:

*ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ*

ԱՐՏԱՇԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ - 100

# ՀԻՇՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ, ՊՐՈՖԵՍՈՐ, ՀԻԱՆԱԼԻ ԳՐԱԿԱՆԱԳԵՏ, ՀԱՄԵՍՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ



*Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԽՍՀՄ եւ Վրաստանի գրողների միության անդամ, Թբիլիսիի Սուլխան-Սաբայի (այժմ՝ Իլիայի) անվան պետական համալսարանի հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ եւ իմ գիտական ղեկավար՝ ԱՐՏԱՇԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆԻ ծննդյան 100-ամյակը: Այդ օրը, ինչո՞ւ չէ, ահանդիսավորությամբ պետք է նշվեր ե'ւ Երեւանի, ե'ւ Թբիլիսիի գիտական շրջաններում, այս օրերին մենք նրա շիրիմը ծաղիկներով պետք է զարդարեինք ոչ թե Թբիլիսիի Մուխաթգվերդիի հասարակական գործիչների ու գրողների պանթեոնում, այլ Թբիլիսիի Խոջիվանքի «Հայոց Մեծաց» պանթեոնում: Բայց ավա՜ղ… Ինչպես ինքը՝ գիտնականն էր կյանքում շատ համեստ անձնավորություն, այնպես էլ՝ համեստորեն հիշում ենք նրա 100-ամյակը… ընդամենը այս հոդվածով:*

Արդեն 30 տարուց ավելի է, ինչ մեզ հետ չէ պրոֆեսորը, սակայն նրա տված գիտելիքները, խորհուրդները միշտ մեզ հետ են, մեզ՝ նրա ուսանողների, գործընկերների հետ: Ասում են, անփոխարինելի մարդ չկա: Բայց դա ամենեւին չի վերաբերվում պրոֆեսոր Մխիթարյանին: Նրա մահից հետո ասես որբացան հայ ուսանողները, հայոց լեզվի ու գրականության ամբիոնի «մեջքը կոտրվեց»: Չեղավ երկրորդ Մխիթարյան- գրականագետ-պրոֆեսոր:

Պրոֆեսոր Մխիթարյանի ամեն մի դասախոսություն կյանքի դաս էր, դասեր, որոնք օգնում են մեզ առ այսօր: Ազնվություն, աշխատասիրություն, նվիրվածություն գործին, գեղեցիկն ընկալելու կարողություն, ահա այս հատկանիշներն էր ձգտում սերմանել մեր մեջ դասախոսը, հատկանիշներ, որոնք յուրահատուկ էին հենց իրեն՝ Արտաշես Մխիթարյանին: Հաճախ էր ասում՝ ավելի լավ է մարդ կույր լինի, անդամալույծ, քան զուրկ լինի գեղեցիկը զգալու ունակությունից, գեղեցիկի ոլորտը՝ արվեստն ու գրականությունը զգալու ունակությունից: Հիրավի, պրոֆեսորն իր մեջ մարմնավորում էր վսեմը, գեղեցիկը, եւ պատահական չէր, որ դասախոսություններին հաճախ էր անդրադառնում այդ թեմային:

Բազմակողմանի է Մխիթարյան-գիտնականի ուսումնասիրության ոլորտը. «Գրական-տեսական հարցեր», «Հայ գրականության հարցեր», «Վրաց գրականություն», «Ռուս գրականություն»,«Գրական կապեր»:

Ինչ ոլորտ էլ ուսումնասիրելիս լիներ գրականագետը, կարեւորը մարդն էր, նրա հոգեւոր կյանքը: Ըստ նրա, գեղարվեստական գրականությունը բերում է ճշմարտություններ, հայտնություններ, ներդաշնակություններ, որոնք նպաստում են մարդկության ձգտմանը դեպի գեղեցիկը, վսեմը: «Գեղարվեստական գրականության, կյանքի ճշմարտացի վերաստեղծման հիմնական կոչումը նա տեսնում էր ակտիվ միջամտության մեջ կյանքին՝ գեղեցիկն ու ճշմարիտը, արդարը հաստատելու համար»: (Է.Ախտյան, «Արտաշես Մխիթարյան», Թբիլիսի, Մերանի, 1996թ.):

Գեղարվեստական խոսքի միջոցով գրականությունը շնչավորում է անկենդան թուղթը,- ասում էր պրոֆեսորը,- նրա վրա ստեղծում է մի ամբողջ աշխարհ: Մխիթարյանն իրավացիորեն նշում էր, որ գրական երկի ստեղծման համար, բացի տաղանդից, պահանջվում է հոգեւոր ուժերի լարում, հոգու մեծություն ու մաքրություն, քաղաքացիական խիզախություն: Այս դեպքում միայն նա կմտնի ժողովրդի սիրտը որպես վերակառուցող ուժ եւ կմնա նրանում՝ դառնալով նրա կենդանի աշխարհայացքի թանկագին ու անբաժանելի մասը:

Հայ գրականությունն ուսումնասիրելիս Ա.Մխիթարյանն իր առաջնային նպատակն է համարել ուսումնասիրել նախ Վրաստանում ստեղծված հայ գրականությունը եւ պատահական չէր, որ իր դոկտորական թեզի թեման հենց դա ընտրեց ու հաջողությամբ պաշտպանեց: Իսկ 1966 թվականին նա հրատարակեց «Վրաստանի սովետահայ գրականությունը» մենագրությունը:

Վրաց անվանի գրողների մասին գրված Ա.Մխիթարյանի հոդվածները գիտական ներդրում են թե' հայ եւ թե' վրաց գրականության պատմության մեջ: Վրաց ամեն մի գրող ու ամեն մի ստեղծագործություն նա մեկնաբանում էր համաշխարհային գրական պրոցեսի լույսի տակ:

Հայ, վրաց գրողներից ու բանաստեղծներից բացի, Ա.Մխիթարյանն անդրադարձել է նաեւ ռուս դասական ու ժամանակակից գրականությանը: Մ.Յ.Լերմոնտովի, Լ.Ն.Տոլստոյի, Մ,Շոլոխովի եւ Ն.Տիխոնովի ստեղծագործությունների վրա աշխատելիս նա հայտնաբերել է նրանց՝ հայ թարգմանիչներին վերաբերող անհայտ ու հետաքրքիր արխիվային նյութեր:

Առանց ժողովուրդների կապի, փոխգործողության չկա մեծ գրականություն, մեծ մշակույթ: Աշխարհի մեջ գրականությունների, մեծ գրողների հարստության գաղտնիքն առաջին հերթին նրանում է, որ նրանք ներառել են իրենց եւ աշխարհի շատ ժողովուրդների համամարդկային մշակույթում բյուրեղացած հարստությունները: Ահա այս նշանաբանով էր առաջնորդվում գրականագետը գրական կապերի ոլորտն ուսումնասիրելիս:

Իր գրականագիտական մտորումները գիտնականն ամփոփել է թվով 10 մենագրություններում ու 100-ից ավելի գիտական հոդվածներում՝ տպագրված Վրաստանի, Հայաստանի, Ռուսաստանի գիտական աշխատությունների ժողովածուներում եւ բազմաթիվ այլ պարբերականներում:

Սիրելի' դասախոս, պրոֆեսոր, գիտական ղեկավար, շնորհավո'ր 100-ամյակդ: Քանի ապրում են Ձեր ուսանողները, վառ կմնա եւ Ձեր հիշատակը, իսկ Ձեր գիտական ներդրումներով՝ կապրեք հարատեւ:

Միշտ Ձեր ուսանող, հայցորդ, գործընկեր

***ԷՄՄԱ ԱԽՏՅԱՆ***

***Բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր***

ԿՐԹԱԿԱՆ

# ԱՌԱՎԵԼ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

*Վրաստանում նախադպրոցական կրթության համակարգը, բարեփոխումների շրջանակներում, 2011 թվականից անցել է Տեղական ինքնակառավարման մարմնի (ՏԻՄ) ենթակայության ներքո: Այդուհետ ոլորտը կարգավորվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Վրաստանի օրենքով: Հետեւաբար, նախադպրոցական կրթության հաստատության հիմնադրման, նրա կանոնակարգի, կառավարման ու ֆինանսավորման սկզբունքների մշակման հարցում պատասխանատու է ՏԻՄ-ը:*

Ընթերցողին հիշեցնենք, որ 2013 թվականին Վրաստանի կրթության եւ գիտության (ԿԳ) նախարարության Ազգային ուսումնական ծրագրերի դեպարտամենտին կից ստեղծվել էր Նախադպրոցական կրթության զարգացման վարչություն, որը միայն բովանդակային առումով չէր աջակցում տվյալ ոլորտի զարգացմանը, այլ համահավասար պայմանների ստեղծմամբ՝ նպաստում յուրաքանչյուր երեխայի դպրոցին նախապատրաստվելուն եւ նրանց որակյալ նախադպրոցական կրթության ապահովմանը: Վարչության գործառույթներից է նաեւ համակարգի մարտահրավերների բացահայտումն ու դրանց լուծումներ գտնելը:

Հավելենք, որ բնագավառի իրավական կարգավորման առումով՝ 2015 թվականին Վրաստանի կրթության եւ գիտության (ԿԳ) նախարարի հրամանով հաստատվել է «Դպրոցական նախապատրաստման կրթական պետական չափորոշիչ», իսկ 2016 թվականին վավերացվել է «Վաղ եւ նախադպրոցական դաստիարակության եւ կրթական մասին» Վրաստանի օրենքը (N5366-II Ս), որը կարգավորում է երկրում վաղ եւ նախադպրոցական դաստիարակության եւ կրթության համընդհանուր հասնելիության, զարգացման ու որակի ապահովման իրավական հիմունքները: Դրանից բացի, այդ օրենքը սահմանում է պետական մարմինների, մունիցիպալիտետների եւ այլ իրավաբանական ու ֆիզիկական անձանց իրավասությունները, պարտականությունները, գործառույթներն ու պատասխանատվությունը:

Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) եւ «Վորլդ Վիժեն-Վրաստանի» աջակցմամբ մշակվել է «Վաղ եւ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ»: Չափորոշիչը սահմանում է. երեխայի ծննդյան օրից մինչեւ դպրոցական նախապատրաստման կրթական ծրագրի սկսելը՝ երեխայի համակողմանի զարգացման հասնելիք արդյունքները, կրթական ծրագրի որակի չափանիշները: Մյուս փաստաթուղթը «Դաստիարակ-մանկավարժի մասնագիտական չափորոշիչն» է, որը որոշում է դաստիարակ-մանկավարժի անհրաժեշտ գիտելիքները եւ իրավասությունները: Ըստ չափորոշչի՝ 2024 թվականից նախադպրոցական դաստիարակության հաստատություններում աշխատել ցանկացողներից պահանջվում է բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում: Նրանք, ովքեր աշխատանքի են տեղավորվել մինչ այդ եւ ունեն ցանկացած մասնագիտության/ուղղության/ոլորտի բարձրագույն կրթություն, պետք է անցնեն նախարարության կողմից մշակված վարժանք-մոդուլ եւ ձեռք բերեն «դաստիարակ-մանկավարժի» կարգավիճակ: Վարժանքին չմասնակցողներին կտրվի միայն «դաստիարակի» կարգավիճակ:

Տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդաբանական աջակցություն ցուցաբերելու միտումով՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի եւ «Վորլդ Վիժեն-Վրաստանի» աջակցությամբ ստեղծվել է նույնպես դաստիարակ-մանկավարժի ուղեցույց, վարժանքների մոդուլ, դպրոցական նախապատրաստման ծրագրի յուրաքանչյուր շաբաթվա ակտիվությունների ժողովածու, ֆիզիկական եւ կրթական միջավայրի կազմակերպման անհրաժեշտ նյութերի ու ռեսուրսների առաջարկությունների ցանկ (տես՝ http://ncp.ge/ge/preschool-education/general-part/damkhmare-sakhelmdzghvaneloebi).: Գործում է նշյալ ծրագրի մշտադիտարկման համակարգ: Նախադպրոցական կրթության էլեկտրոնային կայքն է՝ www.preschooleducation.ge:

Մեր թերթի ընթերցողին իրազեկենք նաեւ, որ վերջերս Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի (ԿԳՄՍ) նախարարության պատվերով հայերեն եւ ադրբեջաներեն են թարգմանվել վերը նշված չափորոշիչները եւ շուտով դրանք հասանելի կլինեն հասցեատիրոջը: Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, պետական լեզվի իմացության բարելավման նպատակով, նախատեսվում է բիլինգվալ ծրագրի մշակում: Այս մասին հայտնում է մեր նախարարության Նախադպրոցական կրթության զարգացման վարչության պետ Նինո Բեսելիան: Նրա տեղեկության համաձայն՝ այժմ ընթանում է նախադպրոցական հաստատությունների ավտորիզացիայի կարգի մշակման գործընթաց: Այն կհաստատվի հաջորդ տարի եւ հիմնված է վերը նշված չափորոշիչների վրա: 2019 թվականին ծրագրվում է 2-5 տարեկան երեխաների դաստիարակ-մանկավարժի մեթոդական ձեռնարկի (kurikulumi) ստեղծում եւս:

***ԿԱՐԻՆԵ ՄԱՆՈՒԿՅԱՆ***

***Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության փորձագետ***

## ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԱՐՈՒՄ Է ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

*Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը խոստանում է ռուս գործընկերներից փորձել տեղեկություն ստանալ այն մասին, թե ինչի հիման վրա են հայտարարում, որ Հայաստանի վրա Միացյալ Նահանգների կողմից ճնշում է գործադրվում: Այս մասին Նիկոլ Փաշինյանն ասաց Դիլիջանում՝ անդրադառնալով ՌԴ-ի փոխարտգործնախարար Գրիգորի Կարասինի վերջին հայտարարությանը:*

- Հայաստանի Հանրապետությունը վարում է ինքնուրույն քաղաքականություն, եւ կարծում եմ, որ եթե ոչ բոլորը, ապա շատերն են դա տեսնում: Եվ Հայաստանի այդ քաղաքականությունը շարունակվելու է,- ասաց վարչապետի պաշտոնակատարը:

Անդրադառնալով ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովի հայտարարությանն այն մասին, թե Մոսկվան ու Երեւանը փաստաթուղթ կստորագրեն կենսալաբորատորիաների վերաբերյալ՝ Փաշինյանը հայտարարեց. «Նման պայմանագիր նախկինում քննարկվել է Հայաստանի իշխանությունների հետ: Մեր կառավարության օրոք մենք երբեք Ռուսաստանի մեր գործընկերների հետ այդպիսի հարց չենք քննարկել: Անհրաժեշտ է պարոն Լավրովից ավելի մանրամասն տեղեկանալ, թե ինչ նկատի ունի նա»:

Հարցին, թե արդյոք Հայաստանը դիտարկում է ամերիկյան զենք ձեռք բերելու հնարավորություն, Փաշինյանն ասաց. «Մենք որեւէ կոնկրետ հնարավորություն եւ առաջարկություն այս պահին չենք տեսնում»:

### ԵԱՀԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



*Դեկտեմբերի 18-ին Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանն ընդունեց ԵԱՀԿ գործող նախագահի անձնական ներկայացուցիչ Անջեյ Կասպրչիկին:*

*Հանդիպմանը զրուցակիցները քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացին առնչվող հարցեր:*

*Կողմերը կարեւորել են փոխվստահության եւ խաղաղ գործընթացի համար անհրաժեշտ մթնոլորտի ձեւավորմանն ուղղված քայլերի իրականացումը:*

## ՀԱՎԱՆԱԿԱՆ Է ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐՎԻ




*Նոր կառավարության կառուցվածքում Սփյուռքի նախարարության չլինելու հավանականությունը բավական մեծ է: Այս մասին դեկտեմբերի 19-ին, «Ներուժ» ծրագրի մասնակիցների հետ զրույցում, նշեց Հայաստանի վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը:*

- Մենք հիմա քննարկումների փուլում ենք, եւ մեր ու, ընդհանրապես, պետական կառավարման համակարգում ամենակարեւոր խնդիրը՝ հասնել կառավարման առավել արդյունավետ մակարդակի, այդ թվում՝ սփյուռքի հետ հարաբերություններում: Կա այդպիսի հավանականություն, եւ բավական մեծ է այդ հավանականությունը, որ նոր կառավարության կառուցվածքում սփյուռքի նախարարություն չենք ունենա, բայց դա չի նշանակում, որ մենք այլ կառույցների միջոցով այդ կապն արդյունավետ չենք դարձնի,- ասաց Փաշինյանը:

Վարչապետի պաշտոնակատարը վերջնական որեւէ բան չասաց, սակայն նկատեց, որ այս խնդրի լուծման մի քանի տարբերակներ են քննարկվում:

- Ամենակարեւոր, ինստիտուցիոնալ խնդիրը հետեւյալն է, որ սփյուռքի հետ հարաբերությունների կոմպոնենտ ունեն այսօրվա դրությամբ մեր բոլոր նախարարությունները, առանց բացառության, եւ այդ ոչ բոլոր կոմպոնենտներով է զբաղվում Սփյուռքի նախարարությունը: Սա ինստիտուցիոնալ խնդիր է, որը մենք պետք է լուծենք, եւ դա լուծելու մի քանի տարբերակներ կան, որոնց վրա աշխատում ենք,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Հայաստանի վարչապետի պաշտոնակատարն ավելի վաղ հայտնել էր, որ առկա նախարարությունների թիվը կրճատելու նպատակ ունեն:

### ՍՈՒՐԵՆ ՍԱՖԱՐՅԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ



*Հայաստանի նկարիչների միության 19-րդ համագումարում, որը տեղի ունեցավ դեկտեմբերի 15-ին, կինոյի տան դահլիճում, միության նախագահ ընտրվեց Սուրեն Սաֆարյանը:*

*Սուրեն Սաֆարյանը ստացավ 193 ձայն:*

*Նախագահի թեկնածուներն էին Կարեն Աղամյանը, Սուրեն Սաֆարյանը, Խաչիկ Աբրահամյանը եւ Հաղթանակ Շահումյանը, ով ի սկզբանե ինքնաբացարկ հայտարարեց:*

*Ընտրություններին մասնակից 351-ից 193-ը քվեարկել են Սուրեն Սաֆարյանի օգտին:*

*Հայաստանի նկարիչների միության նախկին նախագահ Կարեն Աղամյանը շնորհավորեց նորանշանակ նախագահին եւ, հարկ եղած դեպքում, իր աջակցությունն առաջարկեց նրան:*

*«Ես շնորհակալություն եմ հայտնում 20 տարի ինձ վստահելու համար: Սուրենին ցանկանում եմ մեծ հաջողություններ, նա երիտասարդ եւ էներգիայով լի անձնավորություն է»,- նշեց Աղամյանը:*

## ՄԵԿՆԱՐԿԵՑ «ՆԵՐՈՒԺ» ԾՐԱԳԻՐԸ

*Ծրագրի գաղափարախոսությունը՝ այսուհետեւ՝ ոչ միայն ակնկալել աջակցություն սփյուռքից, այլեւ աջակցել սփյուռքին: Հայաստանի սփյուռքի նախարարության «Ներուժ» ծրագիրը պաշտոնապես մեկնարկել է:*




Նախաձեռնողները վստահ են, որ այն առանցքային նշանակություն է ունենալու՝ Հայաստան-սփյուռք գործակցության համատեքստում: ՀՀ-ի սփյուռքի նախարար Մխիթար Հայրապետյանը նշում է, որ մինչ հեղափոխությունը սփյուռքի հետ տարվող քաղաքականությունը Հայաստանակենտրոն էր, մոտեցումը՝ միակողմանի: Ընդհանրական ասած՝ եթե դու սփյուռքահայ էիր, գումար ունեիր եւ պատրաստ էիր այն ծախսել Հայաստանում, ուրեմն դու կարեւոր էիր: «Ներուժ»-ը ստեղծվել է՝ կոտրելու միակողմանիության այս սկզբունքը:

«Ներուժ» ինտերակտիվ սթարթափ ծրագիրը նախատեսված է սփյուռքի 18-ից 35 տարեկան հայազգի երիտասարդ ձեռներեցների համար: Ծրագրի առաջնային նպատակներն են.

✓ հայազգի երիտասարդ ձեռներեցների համար հարթակներ եւ հնարավորություններ ստեղծել՝ Հայաստանում բիզնեսով զբաղվելու համար.

✓ օժանդակել էկոհամակարգին եւ կառուցել ամուր ու առողջ սթարթափային էկոհամակարգ.

✓ ապահովել կիրառական ուղղություն՝ ինչպես կառուցել արժեք գեներացնող, առեւտրապես կենսունակ եւ ճկուն սթարթափային բիզնես.

✓ կառուցել եւ օգտագործել առանցքային սթարթափային բիզնեսի զարգացման հմտություններ.

✓ հնարավորություններ ստեղծել համագործակցության եւ ֆինանսավորման համար:

Ծրագրի թիրախային ոլորտներն են գյուղատնտեսությունը, զբոսաշրջությունը եւ նորարար տեխնոլոգիաները:

### ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԹԻՎԸ ՆՎԱԶԵԼ Է

*Հայաստանում պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը, 2018-ի առաջին 8 ամիսներին նախորդ տարվա ժամանակի համեմատ, շարունակաբար նվազել է:*

*Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվն այս տարվա հունվարին եղել է 70 հազար 10, որը 2017-ի նույն ամսվա համեմատ նվազել է 13.1 տոկոսով: Այս տարվա փետրվարին Հայաստանում եղել է 69 հազար 476 գործազուրկ, որը, նախորդ տարվա նույն ամսվա համեմատ, նվազել է 14 տոկոսով, այս տարվա մարտի ցուցանիշը կազմել է 68 հազար 777, որը, 2017-ի նույն ժամանակի համեմատ, նվազել է 14.9 տոկոսով: Ապրիլին Հայաստանում գրանցված է եղել 68 հազար 633 գործազուրկ՝ նախորդ տարվա համեմատ 14.4 տոկոսով պակաս, այս տարվա մայիսին գործազուրկների թիվը կազմել է 68 հազար 717՝ նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ 13 տոկոսով պակաս:*

*2018-ի հունիսին գործազուրկների թիվը, նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ, նվազել է 11.6 տոկոսով՝ կազմելով 77 հազար 402 մարդ, հուլիսին՝ 10.5 տոկոսով՝ կազմելով 76 հազար 38 մարդ: Իսկ օգոստոսին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը կազմել է 74 հազար 948՝ նախորդ տարվա նույն ժամանակի համեմատ նվազելով 10.1 տոկոսով:*

## ՈՒԺԵՂԱՑՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ

*«Իշխան» եւ «Սիգ» ձկնատեսակների ձվադրման ժամանակահատվածում, ձկների բնական վերարտադրությունն ապահովելու նպատակով, արգելվել է որեւէ լողամիջոցի մուտքը Սեւանա լիճ եւ ուժեղացված հսկողություն է սահմանվել Հայաստանի ողջ տարածքում:*

Մինչեւ արգելքի ժամանակահատվածը՝ «Սեւան» ազգային պարկի տարածքից դուրս են բերվել բոլոր լողամիջոցները, որսագործիքները եւ ժամանակավոր կացարանները:

2018 թվականի դեկտեմբերի 20-ից մինչեւ 2019 թվականի հունվարի 20-ը ներառյալ իրականացվելու է խիստ հսկողություն՝ Սեւանը գոտեւորող բոլոր անտառային ճանապարհներում, որտեղ տեղակայվել են հսկիչ կետեր: Սահմանվել է շուրջօրյա հերթափոխություն՝ մշտական կապ պահելով իրավապահ մարմինների հետ: Արգելվել է բոլոր տեսակի որսագործիքների եւ լողամիջոցների մուտքը Սեւանա լիճ:

## «ԱՐՄԵՆՊՐԵՍ»-Ը 100 ՏԱՐԵԿԱՆ Է

100
ԱՐՄԵՆՊՐԵՍ
ARMENPRESS

*Հայաստանի առաջին՝ «Արմենպրես» պետական լրատվական գործակալությունը նշում է հիմնադրման 100-ամյակը:*

«Արմենպրես»-ը հիմնադրվել է 1918 թվականի դեկտեմբերի 18-ին, երբ, Հայաստանի առաջին հանրապետության Ազգային Խորհրդի որոշմամբ, ստեղծվեց նախադեպը չունեցող պետական լրատվական Հայկական հեռագրական գործակալությունը: Ներկայում «Արմենպրես» լրատվական գործակալությունը գործում է որպես փակ բաժնետիրական ընկերություն, որի բաժնետոմսերը տնօրինում է Հայաստանի Հանրապետությունը: Գործակալությունն ամենահինն է Հայաստանում:

Գործակալությունն օրական հրապարակում է մի քանի հարյուրի հասնող լուր՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն լեզուներով:

«Արմենպրես»-ը միջազգային լրատվական 4 կազմակերպությունների անդամ է: «Արմենպրես»-ը երկկողմ պայմանագրեր ունի աշխարհի ավելի քան 20 առաջատար լրատվական գործակալությունների հետ:

***«Վրաստան» թերթի խմբագրությունը ի սրտե շնորհավորում է «Արմենպրես» գործակալության աշխատակիցներին՝ մաղթելով երկարամյա եւ բեղմնավոր գործունեություն:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ



*24.12.2018. Սուրբ Դավիթ մարգարեի եւ Հակոբոս Տյառնեղբայր առաքյալի հիշատակության օր*

*25.12.2018. Սուրբ Ստեփանոս Նախավկայի եւ առաջին մարտիրոսի հիշատակության օր*

*27.12.2018. Սուրբ Պետրոս եւ Պողոս առաքյալների հիշատակության օր*

***29.12.2018. Բարեկենդան Սուրբ Ծննդեան պահոց***

Սուրբ Ծննդյան պահքի Բարեկենդանն անփոփոխ նշվում է դեկտեմբերի 29-ին, այսինքն՝ Սուրբ Ծննդից 7 օր առաջ: Սուրբ Ծննդյան պահքն իր մեջ ընդգրկում է նաեւ Նոր Տարվա տոները մինչեւ հունվարի 5ը՝ Սուրբ Ծննդյան ճրագալույցը:

***29.12.2018. Սուրբ Որոտման որդիների՝ Հակոբոս առաքյալի եւ Հովհաննես ավետարանչի հիշատակության օր***

## ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ՕԶՈՒՐԳԵԹԻԻ ԵՎ ԲԱԹՈՒՄԻԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

*Դեկտեմբերի 15-ին Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Աջարիայի, Գուրիայի, Իմերեթիի ու Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Տեր Արարատ քահանա Գումբալյանը, Վրաստանում գտնվող ԱՄՆ-ի «Ջինիշյան» հիմնադրամի ներկայացուցիչները Գուրիայի տարածաշրջանի կենտրոն Օզուրգեթիում, հանդիպում ունեցան տեղի հայկական համայնքների ներկայացուցիչների հետ:*

Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 16-ին, Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւ Արարատ քահանա Գումբալյանը մատուցեցին կիրակնօրյա Սուրբ եւ Անմահ պատարագ, որին ներկա էին Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը, «Ջինիշյան» հիմնադրամի ներկայացուցիչները:

Պատարագի ավարտից հետո, ներկաները ներկա գտնվեցին Հայաստանի մշակույթի վաստակավոր գործիչ, պրոֆեսոր, գեղանկարիչ Սուսաննա Մկրտչյանի անհատական ցուցահանդեսի բացմանը:

ՀՈԲԵԼՅԱՆ

# ՍԻՐՈ ՈՒ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԳԻՎԻ ՇԱՀՆԱԶԱՐԻՆ

*Քիչ են այն հոբելյանները, որոնց անցկացումը վեր է ածվում հոգեւոր մի տոնի, ուր թեւածում է՝ արժանի երախտիքը ու տուրքը արժանավորին հատուցելու, հոգին թեթեւացնող խնդությունը...*



Այդպիսի զգացումներով էր հագեցած, «Վրաստանի հայկական գիտա-հետազոտական հասարակական կազմակերպության» նախաձեռնությամբ եւ Վիրահայոց թեմի աջակցությամբ, բանաստեղծ-թարգմանիչ,Վրաստանի եւ Հայաստանի գրողների միությունների անդամ, Եղիշե Չարենցի ու Մաչաբելու անվան մրցանակների դափնեկիր, Վրաստանի «Պատվո» եւ Հայաստանի «Մովսես Խորենացի» շքանշանների ասպետ, Թբիլիսիի պատվավոր քաղաքացի Գիվի Շահնազարի ծննդյան 85-ամյակին նվիրված երեկոն՝ Թբիլիսիի «Հովհաննես Թումանյանի տուն» գիտամշակութային կենտրոնում (ղեկավար՝ Գիսանե Հովսեփյան):

Հոբելյարին շնորհավորելու էին եկել նրա տաղանդի գնահատողները՝ գրչակիցներ, դիվանագիտական, մտավորականության ներկայացուցիչներ:

«Վրաստանի հայկական գիտա-հետազոտական հասարակական կազմակերպության» ղեկավար, պրոֆեսոր Էմմա Ախտյանի՝ Գիվի Շահնազարի կյանքի ու ստեղծագործական ուղու գնահատական խոսքը, իրականում, շնորհակալության ու երախտիքի տուրք էր՝ իր պատկառելի մարդկային կերպով, իր ճշմարիտ արվեստով սերունդներ դաստիարակող, թարգմանական արվեստի բարձունքը նվաճած արվեստագետին: Անգերազանց թարգմանչին, ում թարգմանությունների շնորհիվ վրաց ընթերցողն այսօր, բնօրինակին համահունչ, ըմբոշխնում է դրկից հարեւան հայ ժողովրդի հոգեւոր գանձարանի գոհարակերտ կոթողները՝ Նարեկացի, Քուչակ, Սայաթ-Նովա, Հովհաննես Թումանյան, Եղիշե Չարենց, Ավետիք Իսահակյան, Վահան Տերյան, Համո Սահյան, Պարույր Սեւակ, Սիլվա Կապուտիկյան...

Իր մարդկային տեսակով ու անգերազանց արվեստով հայ ու վրաց ժողովուրդների բարեկամության նոր կամուրջը դարձած իրենց սիրելի համաքաղաքացուն ու բանաստեղծին շնորհավորեցին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաց ուղղափառ եկեղեցու Անդրեա առաքյալի անվան ակադեմիայի ռեկտոր Սերգո Վարդոսանիձեն, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը, դիվանագետ, հայագետ Ռամազ Գորգաձեն, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամ թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, բանաստեղծուհի Մարինա Կիրակոսյան-Մոսեսովան, Թբիլիսիի պետհայդրամ թատրոնի դերասան, ՀՀ վաստակավոր արտիստուհի Սելանյա Բարսեղյանը, Տարածաշրջանային զարգացման եւ ենթակառույցների նախարարի խորհրդատու Ալեքսանդր Մովսիսյանը եւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Հայաստանի Մշակույթի նախարարի խորհրդական Արուսյակ Տերչանյանը հոբելյարին փոխանցեց Մշակույթի նախարար Լիլիթ Մակունցի շնորհավորական ուղերձը:

Երեկոյի մասնակիցները բուռն ծափերով ընդունեցին արծաթահեր հոբելյարի շնորհակալական ջերմ խոսքը:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# ԿԱՅԱՑԱՎ «ԻՄ ՔԱՄԱՆՉԱՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Օրերս Թբիլիսիի «Կովկասյան տուն» մշակութային կապերի կենտրոնում կայացավ Արտեմ Գրիգորենցի բանաստեղծությունների ժողովածուի շնորհանդեսը: Ժողովածուն խմբագրել էր ճանաչված բանաստեղծ, բանասիրության դոկտոր Վլադիմիր Սարիշվիլին: Հենց նրա խորհրդով էլ գիրքը կոչվեց «Իմ քամանչա»՝ խմբագրին շատ էր դուր եկել երաժշտական այդ գործիքին եւ Մեծն աշուղ Սայաթ-Նովային նվիրված նույնանուն բանաստեղծությունը: Ցավոք, Վլադիմիր Սարիշվիլին վախճանվեց հենց նույն օրը, երբ ժողովածուի ձեռագիրը տրվել էր տպարանին, ուստիեւ Ա.Գրիգորենցը գրքի շնորհանդեսը նվիրեց ժողովածուի խմբագրի հշատակին:

Ժողովածուի շնորհանդեսին խոսքով ելույթ ունեցան Շոթա Ռուսթավելու անվան համավրացական ընկերության նախագահ Դավիթ Տակիձեն, Վրաստանի ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Վաժա Ազարաշվիլին, բանաստեղծներ Գուրամ Ճավճանիձեն, Գարրի Ղալամքարովը, ասմունքող Ինա Դավիթաշվիլին, Թբիլիսիի հայերի միության նախագահ Միխեիլ Թադեւոսովը:

***ԱՐՍԵՆ ԲԱՐԱԿԱԶՅԱՆ***




# ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 4.Հայ լեզվագետ, բացատրական բառարանի հեղինակ: 11.Մետաղամշակման հաստոցի տեսակ: 12.Կրկեսի ժամանակավոր շենք: 13.Լուսային հոսքի միավորը ՍԻ համակարգում: 14.Գերմանացի ֆիզիկոս, քվանտային տեսության հեղինակ: 15.Արհեստավորի կահավորված սեղան: 19.Ուրարտական թագավոր: 23.Մարմնամարզիկ: 25. Շան վնգստոց, կլանչոց: 27.Ձմեռային տաք հագուստ: 28.Լիրիկական քնարերգության հովանավոր մուսան՝ հունական դիցարանում: 29.Գաճաճ: 31.Ֆլոբերի պատմավեպը: 37.Ժողովը իրավազոր ճանաչելու համար անհրաժեշտ ձայների քանակը: 38.Գերմանացի կոմպոզիտոր: 40.Ապացուցում չպահանջող դրույթ: 41.Պայթուցիկ նյութ: 42.Վրացական ամենահայտնի մարզական ակումբ: 43.Ամսանուն:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Դելֆինների ընտանիքի ծովային կաթնասուն: 2.Հանելուկի տեսակ: 3.Գերմանացի իդեալիստ փիլիսոփա: 5.Կենդանական եւ բուսական հյուսվածքների բաղադրիչ: 6.Իտալացի գրող, «Չիպոլինոյի արկածները» հեքիաթի հեղինակ: 7.Թրջված եւ ծլած ցորեն, գարի: 8.Վրացական ֆուտբոլի վետերան, սպորտի վաստակավոր վարպետ ... Շենգելիա: 9.Ավստրալիական վայրի շուն: 10.Գյուղատնտեսական աշխատանքի տեսակ: 16.Տարբեր բույսերի խաչասերում: 17.Ռուս հոկեյիստ, Օլիմպիական չեմպիոն: 18.Կրոնական պաշտամունքի առարկա դարձած կենդանի կամ բույս: 20.Վրաստանի պատմական երկրամասի բնակիչ: 21.Մետաքս արտադրող թրթուր: 22.Հաշվապահական հաշվեկշռի մի մաս: 24.Մանրահատիկ նստվածքային ապար: 26.Կերպարվեստի ժանր: 28.Եռատերեւ դաշտային ծաղկաբույս: 30.Երաժշտական գործիք: 32.Ա.Դյումայի եռերգության հերոսներից: 33.Վրաստանը բնական գազով մատակարարող ադրբեջանական ընկերություն: 34.1981 թվականի Թբիլիսիի «Դինամոյի» կիսապաշտպան: 35.Քիմիական որեւէ տարրի միացությունը թթվածնի հետ: 36.Հայ մեծ բանաստեղծ: 38.Երկրաչափական մարմին: 39.Թումանյանի պոեմի հերոսներից:

*Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ*

## ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Մինաս: 4.Արտաշատ: 8.Կարմիր: 11.Ապարան: 14.Որմ: 15.Նենգ: 16.Զոլա: 17.Լիանա: 18.Վրան: 19.Անի: 21.Զրույց: 22.Այր: 25.Ամարաս: 26.Քարթլի: 28.Աներծ: 31.Սեմ: 33.Տարեկան: 36.Դեմ: 38.Կոնդ: 39.Սե: 40.Շաքե: 41.Սիս: 43.Տրե: 44.Մոտ: 45.Արենա: 48.Աղաց: 49.Փափլիկ: 51.Մակար: 52.Լենա: 54.Նանդու: 56.Որքան: 57.Անդեմ:

***ՈՒՂՂԱՁԻԳ.*** 1.Մերենիա: 2.Նիկոլոզ: 3.Սուրմալու: 4.Արինա: 5.Արագվի: 6.Տարոն: 7.Քանաքեռ: 9.Արի: 10.Րե: 12.Ազարյան: 13.Ալ: 20.Նամուս: 22.Արամե: 23.Դսեղ: 24.Սազայի: 27.Լակոտ: 29.Ծերենց: 30.Անդեր: 32.Եդեմական: 34.Եկ: 35.Անրակ: 37.Մշտարթուն: 41.Սիփան: 42.Սոփիկո: 46.Եմեն: 47.Նանա: 50.Իրաք: 53.Կամ: 55.Դա:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445